

ՍԵՄՅՈՆՈՎԿԱՅԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



СЕМЁНОВКА
муниципалитет

Հասցեն՝ գյուղ Սեմյոնովկա 1 փող. 64 շենք
Էլ. փոստ semyonovka.gegharquniq@mta.gov.am
☎ 055-34-09-35

Адрес село Семеновка 1ул. 64 здан.

«29» Հունվարի 2019թ.

« 017 »

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՄՅՈՆՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 29-ին Սեմյոնովկայի համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի 2018թ.-ի ընթացքում համայնքում իրականացված գործունեության, աշխատանքների և ծրագրերի մասին հաշվետվությունը: Նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի անդամներ, համայնքի ավագանու անդամները, համայնքի ակտիվ բնակիչներ:

2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքները ներկայացրեց համայնքի ղեկավար Դավիթ Մնացականյանը, իսկ Ֆինանսական հաշվետվությամբ հանդես եկավ աշխատակազմի առաջատար մասնագետ Ռուզաննա Խանզադյանը: Հաշվետվության շրջանակներում հյուրերին ներկայացվեց հաշվետու տարվա ընթացքում անցկացված ավագանու նիստերի, բնակիչների դիմումների քննարկման, կայացված որոշումների, սոցիալական և այլ բնույթի հարցերի քննարկման, տրամադրված սոցիալական օգնությունների, ծրագրերի աջակցման, միջոցառումների կազմակերպման և ըստ բնագավառների բազմաթիվ այլ խնդիրների իրականացմանն ուղղված ձեռնարկված միջոցառումների մասին: Ամբողջական հաշվետվությունը ներկայացվեց ըստ առանձին բնագավառների, բարձրացված հարցերին համապատասխանաբար տրվեցին սպառիչ պարզաբանումներ, իսկ առաջարկություններն ընդունվեցին ի գիտություն:

Հնչեցին շնորհակալության ու գովեստի խոսքեր համայնքի ղեկավարի և աշխատակազմի կատարած աշխատանքների մասին:

Հաշվետվությունն ամփոփեց աշխատակազմի քարտուղար՝ Կարինե Պետրոսյանը: Կատարված աշխատանքների համար և համայնքապետի տարեկան հաշվետվությունը գնահատվեց բավարար:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝

Դ. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ